ԱՐԱՐԱՏԻ ԵՎ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԵՐԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

0701, ք. Արտաշատ, Շահումյան 19, հեռ. (0235) 2-20-35, էլ. հասցե՝ ararat-dataran@mail.ru, www.court.am

№ ԴԴԱ-10 23003/25
« 19 » Դեկտեմբերի 2025թ.

1336-25

ՀՀ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ
ԴԱՏԱԿԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏԻ ՂԵԿԱՎԱՐ՝
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ
ԱՌԱՋԻՆ ԴԱՍԻ ՊԵՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԿԱՆ
ՊԱՐՈՆ ՆԱԻՐԻ ԳԱԼՍՏՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Գալստյան,

Ձեզ է ուղարկվում Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի 2025 թվականի պահպանման ծախսերի 4214 հոդվածով (կապի ծառայություններ) փոստային կապի ծառայությունների մասով՝ (պայմանագիր PDU-124-01-25) ըստ գնման պայմանագրին կից թիվ 2 լրացուցիչ համաձայնագիրը:

Խնդրվում է Ձեր հանձնարարականը՝ նշված պայմանագրի գումարի դրական եզրակացությունը փոփոխելու համար:

Հարգանքով

ՂԵԿԱՎԱՐ ԼԻԼԻԹ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Լրացուցիչ համաձայնագիր թիվ 2

19.02.2025թ.-ին կնքված թիվ PDU-124-01-25
Փոստային ծառայությունների մատուցման
պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին

ք.Երևան **19 .12.2025թ.**

«ՀԱՅՓՈՍ» փակ բաժնետիրական ընկերությունը, որը հիմնադրվել է Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն, գրանցված է և գտնվում է Հայաստանի Հանրապետություն, ք.Երևան 0061, Արշակունյաց 65/5 հասցեում և հանդիսանում է Հայաստանի Հանրապետության փոստային կապի նշանակված ազգային օպերատոր (այսուհետ նաև՝ «Ընկերություն»)՝ ի դեմս Կորպորատիվ Հաճախորդների սպասարկման և փոստային պրոդուկտների վարչության ղեկավար Գուրգեն Բաղդասարյանի, մի կողմից, ով գործում է Ընկերության գլխավոր գործադիր տնօրենի՝ 26.06.2025թ.-ի թիվ Լ-ԵԼ-ՀՓ/261-25 Լիազորագրի հիման վրա, և ՀՀ Արարատի և Վայոց Ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը (այսուհետ նաև՝ «Հաճախորդ» կամ «Պատվիրատու»)՝ ի դեմս աշխատակազմի ղեկավար Լիլիթ Հովհաննիսյանի, մյուս կողմից, (այսուհետ Ընկերությունը և Հաճախորդը միասին կհիշատակվեն որպես «Կողմեր») կնքեցին սույն լրացուցիչ համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

Ընկերությունը և Հաճախորդը համաձայնության են գալիս 19.02.2025թ.-ին կնքված թիվ PDU-124-01-25 Փոստային կապի ծառայությունների մատուցման պայմանագրում կատարել հետևյալ փոփոխությունները՝

1. Պայմանագրի 3.3 կետով սահմանվում է բառից հետո 58 258 100 (հիսունութ միլիոն երկու հարյուր հիսունութ հազար մեկ հարյուր) ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ-ն բառերը փոխարինել 57 660 060 (հիսունյոթ միլիոն վեց հարյուր վաթսուն հազար վաթսուն) ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ բառերով:
2. Սույն լրացուցիչ համաձայնագիրը հանդիսանում է 19.02.2025թ.-ին կնքված թիվ PDU-124-01-25 Փոստային կապի ծառայությունների մատուցման պայմանագրի անբաժանելի մասը:
3. Սույն լրացուցիչ համաձայնագիրն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում կնքման պահից:
4. Սույն լրացուցիչ համաձայնագիրը կազմված է հայերեն, հավասարազոր իրավաբանական ուժ ունեցող 2 (երկու) օրինակից: Համաձայնագրի 1 (մեկ) օրինակը մնում է Ընկերության մոտ, իսկ 1 (մեկ) օրինակը տրվում է Հաճախորդին:
5. Կողմերի իրավաբանական հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները.

Ընկերություն՝

«Հայփոստ» ՓԲԸ
ք.Երևան, 0061, Արշակունյաց 65/5
ՀՎՀՀ՝ 02507464
«Կոնվերս Բանկ» ՓԲԸ
Հ/Հ՝ 1930003703156000
Հեռ.՝ (010) 544-444

Կորպորատիվ Հաճախորդների սպասարկման և
փոստային պրոդուկտների վարչության
ղեկավար՝

Գուրգեն Բաղդասարյան ----------
/ստորագրություն/

Պատվիրատու՝

ՀՀ Արարատի և Վայոց Ձորի մարզերի առաջին
ատյանի ԸԻԴ
ք. Արտաշատ, Շահումյան 19
ՀՎՀՀ՝ 02583241
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ՝ 900411002356
Հեռ.՝ (0235) 2-20-35, (0235) 2-15-16,

Աշխատակազմի ղեկավար՝

Լիլիթ Հովհաննիսյան----------
/ստորագրություն/